№ 215 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 1901 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 № 215

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Եղիսաբէթ Ղազարեան Գանջունցեան, Հռիփսիմէ Գրիգորեան Խանդամիրեանց, Աննա Գրիգորեան Բէգլարեանց, Նատալիա Գրիգորեան Ներսէսեանց, Աննա Գրիգորեան Ղարախանեանց եւ Սօֆիա Գրիգորեան Առաքէլեանց, ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին եւ ծանօթներին, առաջինը իր անմոռանալի ամուսնու եւ վերջինները իրանց սիրելի հարազատ եղբօր՝

ՆԵՐՍԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳԱՆՋՈՒՆՑՈՎԻ

մահը եւ խնդրում են իրանց ներկայութեամբ յարգել հանգուցեալի յուղարկաւորութիւնը եւ թաղումը։ Ամբիծքը կը լինի սեպտեմբերի 29-ին, երեկոյեան 6 ժամին։ Յուղարկաւորութիւնը սեպտեմբերի 30-ին, առաւօտեան 10 ժամին, դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ Բնակարանը՝ Կօջօրսկայա փողոց, Տուն Շաղինեանի։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական տեսակէտով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բալախանիից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական դէմքեր.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ

—

Այսօր, շաբաթ, սեպտեմբերի 29-ին, վերջանում են տօնախմբութիւնները, որոնք ծրագրված էին Թիֆլիսում Վրաստանի միացման հարիւրամեայ յօբելեանի առիթով։

Վաղը, կիրակի օր, տօնվում է մի ուրիշ յօբելեան, այն է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան յիսնամեայ գոյութեան յօբելեանը, որի առիթով և կազմակերպված է այս տարի կովկասեան ցուցահանդէսը Թիֆլիսում։ Այդ յօբելեանը առանձին գաղափարական նշանակութիւն ունի այն պատճառով, որ նա մի հասարակական և մի գիտնական հիմնարկութեան է վերաբերում։ Հին Կովկասը միայն ճանաչում էր պաշտօնական ատեանները և իր բոլոր գործերը կարգում—սահմանում էր կառավարչական հաստատութիւնների միջոցով։ Մեր ազգաբնակութիւնը չէր ընդունում ուրիշ ատեաններ։

Յիսուն տարի առաջ, իշխան Վորոնցովի նախաձեռնութեամբ, սկիզբ դրվեց Գիւղատնտեսական ընկերութեան, որ կոչված էր մեր երկրի գիւղատնտեսութեան ներկայացուցիչը լինելու, նրա բազմաթիւ կարիքների արտայայտողը։ Այդ ընկերութեան միջոցով ամեն մի մարդ, որ կը ցանկանայ յայտնել իր տնտեսութեան կարիքների և պահանջների մասին, կարող էր ազատ կերպով գալ այդ ընկերութեան նիստերին և իր յայտնելիքները ասպարէզի վրա դնել։ Եւ ընկերութիւնը, իբրև մի հիմնարկութիւն, որի գործողները ընտրվում էին նոյն հասարակութեան շրջանից, ներկայանում էր իբրև մի հաստատութիւն, որ կախված էր հասարակութիւնից։

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հիմնելուց յետոյ կամաց-կամաց սկսվեցին հաստատվել և ուրիշ հասարակական կազմակերպութիւններ, որոնց վիճակված է բարգաւաճում ապագայում, երբ հասարակական ինքնագործունէութեան գաղափարը աւելի ու աւելի կը տարրանայ ազգաբնակութեան խաւերում։ Իսկ այժմ ուրախալի է, որ մենք մեր երկրում կարող ենք տօնել հասարակական մի հիմնարկութեան յիսնամեակ։

Վաղը, կիրակի, բացվում է և բժիշկների ժողովը, իսկ երկուշաբթի օրվանից, հոկտեմբերի 1-ից, կը սկսվեն կաթնատնտեսութեան ժողովների նիստերը, որոնց կը հետևեն երկրագործութեան, անասնագործութեան և գինեգործութեան ժողովները։ Մենք հրաւիրում ենք մեր ինտելիգենտ դասին ջերմ մասնակցութիւն ունենալ այդ ժողովներում և նպաստել ասպարէզ դրված խնդիրների մշակութեան և աջող լուծման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻԻՑ

—

Սեպտեմբերի 17-ին

Նաւթի հայրենիքը երկունքի մէջ է։ Կովկասեան հարստութեան այս վիթխարի կենտրոնը, բանուորական այս մայլ ու սեւ գաղթավայրը տնքում է, հեծում։ Միլիարդների տիրանալու թեւաւոր յոյսը եթէ բոլորովին չէ չքանում, գոնէ աղմվում է, համեստանում։ Շատ մօտ անցեալը իր արտակարգ աջողութեամբ շատերին էր ստիպում զառանցել միլիոններ վաստակելու քաղցր յոյսով։ Հարստանալու տենդի մէջ էր եւ ծառայող դասը, որ մտածում էր փառաւոր ապագայի փայլից շլացած կապիտալիստների արբեցած դրութիւնից մի կերպ օգտվել, ի նպաստ իր ապահովութեան, թէկուզ համեստ չափով բարւոքելու իր աննախանձելի դրութիւնը։

Այդ զառանցանքից ազատ էր ու հանգիստ միայն մի ողորմելի դասակարգ, ստուար, բայց եւ թշուառ ու անգիտակ մի ամբոխ, որ միշտ եւ յաւէտ քրտնել գիտէ, լուռ ու տքուն, սեւ աշխատանքի անձնուէր։

Նաւթի այժմեան ընկած գինը անպայման անախորժ դէպք է, բայց եւ այնպէս չէ կարելի շարունակ մարդու աչք կոխել ու բարձրաձայն հրատարակել, որ ներկայ դրութիւնը իրաւունք է ներշնչում տէրերին անխիղճ վարվելու—տարիներով՝ քրտնած ծառայողներին առանց մի կոպէկ վարձատրութեան դուրս վռնդելու։ Դա խղճի դէմ գործ է։ Նաւթի գինը աննպաստ է միմիայն վերջին աճուրդներում կապալով հող վերցրածների համար, ուստի եւ սրանք կարող են դժգոհ մնալ եւ դեռ դրան վերադիր՝ կարող են նոյն իսկ ողբալ իրանց ոսկու կոյտերի մահը։ Սակայն ինչ պատճառաբանութիւններով կարող են արդարանալ այն արդիւնաբերողները, որոնք դեռ տասը տասնուհինգ տարի առաջ են ձեռք բերել արդիւնաբերելու հողեր, այն էլ չափազանց նպաստաւոր պայմաններով։

Աւելորդ չենք համարում արձանագրել շատ դէպքերից մէկը, որի անպատիժ փորձը անշուշտ կը ծառայէ իբր չար օրինակ միւսներին։

Գոյութիւն առնելով 1890 թուականից, այսինքն դեռ այն ժամանակներից, երբ նաւթը հազիւ 2—3 կոպէկով էր ծախվում, N.-ի նաւթարդիւնաբերական ընկերութիւնը ոչ միայն կարողանում է իր գոյութիւնը փառաւոր պահպանել, այլ եւ տասնեակ հազարանոց դրութիւնից հանել միլիոններ։ 1891—1895 թուականներին ընկերութիւնը զգում էր իրան աջողութեան գագաթնակէտին, այսինքն մի այնպիսի ժամանակ, երբ չէին երազում անգամ, որ նաւթը 15—18 կոպէկով կը ծախվի։ Փոքր յետոյ նաւթի ընկնող գինը ցնցում է հրճվող մարդկանց եւ հրճուանքը փոխվում է յուսահատութեան, ոչ թէ նրա համար, որ լուրջ վտանգ կայ, այլ նրա համար, որ սպասված աւելի փայլուն ապագան գունատվում է։ Եւ սթափված տէրերը նախկին մեծ տոկոսները ստանալու համար սկսում են տնտեսել շատ շռայլութիւններ։ Բայց ո՞րը։ Այն, որ ամառը Եալտայում ու Բաւարիայում շռայլում են հարիւր հազարներ։

Ահա տնտեսում է եւ «N. եւ ընկ.» ֆիրման։ Սակայն ինչպէս...

Ընկերութիւնը սկսում է տնտեսել, պակասեցնելով ստորին ծառայողների ռոճիկը 25 տոկոսով, այսինքն ստացած վարձի մի քառորդը։ Հարկաւոր է շարունակ 50—70% վաստակել եւ ոչ պակաս, ուստի եւ նա չէ խնայում ոչ մի միջոց նպատակին հասնելու։

«N. եւ ընկ.» պակասեցնում է ծառայողների ռոճիկից 25%, բայց արդեօք գիտէք որքան է վճարում նա, որ այժմ վստահանում է միանգամից այդքան պակասեցնել,—գործակատարներին 50 րուբլի միջին թւով, իսկ բանուորներին—18 րուբլի։

Այն ընկերութիւնը, որ նաւթի 2 կոպէկ ժամանակ շատ գոհ էր, այժմ պատճառաբանում է, որ վնաս է կրում։ Ինչով բացատրել այդ. նրանով միայն, որ մարդիկ առհասարակ ագահ են եւ չեն ուզում բաւականանալ 10% վաստակով (մինչդեռ այս դէպքում 20%-ից աւել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

—

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

V.

Ուսանողութեան ժամանակ (1852—1860) Ռափայէլ Պատկանեանը գրել է երեսուն բանաստեղծութիւն։ Դա այն շրջանն է, երբ բանաստեղծ-ուսանողը իր զարմանալի տաղանդի ամբողջ թափն ու ճոխութիւնն էր ցոյց տալիս, երբ նրա գրչի տակից դուրս եկած երգերը մեր նորագոյն գրականութեան համար կը մնան կլասիկական գոհարներ։

Եթէ չը լինէին էլ ուրիշ գործեր, բաւական էր եւ «Մայր Արաքսի»-ն, որ լոյս տեսաւ 1856 թւականին։ Դժուար է մեր ամբողջ գրականութեան մէջ ցոյց տալ մի ուրիշ գործ, որ դրա չափ ահագին ժողովրդականութիւն լինի ստացած։ Նոյն իսկ հռչակաւոր Նարեկը, որ մի շարք դարերի ընթացքում հայի սրտի մըրմունջն է եղել, հազիւ թէ կարողանայ համեմատվել այդ պարզ ու կարճ բանաստեղծութեան հետ։ Համեմատել չէ կարելի հէնց այն պատճառով, որ Նարեկը միայն սակաւաթիւ ընտրեալներին էր միանգամայն մատչելի, մինչդեռ «Մայր Արաքսի»-ն հասկանում է ամեն մէկը, որ լսում է. նա երգվում է գիտակցութեամբ եւ որպիսի խաւերում։ Նոյն իսկ ծխական դպրոցի երեսը հազիւ տեսած գիւղի դաշտում էլ բարձրանում է նրա ձայնը։ Հայոց գրականութիւնը առհասարակ շատ քիչ է եղել բուն ժողովրդական, հանրային։ Պատկանեանի այդ երգը դարձաւ ազգային «Հայր մեր», համազգային մի նուագ, որ հաւասար չափով սիրելի ու հարազատ է Կովկասում, թէ Պարսկաստանում, Թիւրքիայում, թէ Ամերիկայում։ Մենք, ժամանակակիցներս, չենք կարող սառնասիրտ քննադատներ լինել այդ բանաստեղծութեան վերաբերմամբ. մենք ամենքս, մեր մանկութեան օրերից, նրա թովիչ ձայների ազդեցութեան տակ ենք եղել, սովորել ենք նրան ինչպէս մեր մօր կաթին եւ ամեն անգամ, երբ կրկնում ենք նրա հնչուն ու ձուլածոյ տողերը, միայն հիացմունք ենք զգում։ Սա մի ընդհանուր ազգային ճաշակ է։ Ոչ ոք չէ ասել եւ ոչ ոք չի ասի թէ նա մի ուրիշ, մեզ անծանօթ, զգացմունք է դուրս բերել «Արաքսի արտասուք»-ից եւ մենք չը գիտենք՝ կարող է նա մի ուրիշ զգացմունք զարթեցնել...

Գանք միւս երգերին։ Երիտասարդական սիրտը մեր բանաստեղծի քնարին զանազան հնչիւններ է հաղորդել։ Մերթ խուլ ու տխուր է այդ քնարը, կասէք թէ յուսահատական, երբ բախտի վրա է գանգատվում, երբ հայ գրողի ճակատագիրն է երգում. մերթ նա անկեղծ ոգեւորութեան է հասնում, երբ հայոց գինին ունի իր առջեւ կամ հայ աղջկայ չքնաղութիւնները։ Մի տեղ տեսնում էք՝ նա մտաւ ժողովրդի մէջ, առաւ նրա լեզուն, փարեց նրա հերոսներին, ապա անցաւ հայրենիքին եւ սըրտառուչ թախիծով, մինչեւ հոգու խորքը թափանցող անբաւականութեամբ բաց արաւ նրա դարաւոր մահնման քունը։ Կամ թէ տեսնում էք նրան իբրեւ մարգարէ, որ հնչեցնում է ճակատագրական խօսքեր հայրենիքի ապագայի մասին, կամ թէ զինվում է անողորմ երգիծանքով եւ մտրակում է մեր ցեղային պակասութիւնները...

Այդ բանաստեղծութիւնները միատեսակ չեն արժանաւորութիւնների կողմից. կան շատ թոյլերը, կան միջակները, բայց քիչ չեն եւ այնպիսիները, որոնց երկնային ջերմութիւն է հաղորդել բանաստեղծի կրակոտ զգացմունքը։ Դարձեալ դիմենք ժողովրդին։ Դարձեալ նա կասէ թէ ինքը մեզանից ու ձեզանից, ընթերցող, շատ առաջ է գնահատել իր բանաստեղծի երգերը մէկիկ-մէկիկ. լաւագոյնները երգ է դարձրել, միջակները բերան է արել, իսկ թոյլերը մոռացել է։ Նա կը հարցնէ թէ մեզանից ո՞վ չէ երգել «Բաժակներ առնունք, եղբարք», «Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից», «Մեզնից շատ առաջ», «Թէ սիրում ես թամաշա», «Գարունն է եկել», «Հազար երանի քեզ, մանուկ»։ Ուզո՞ւմ էք դուք քննադատել այդ երգերը։ Քննադատեցէք, դա ձեր գործն է, դուք կարող էք գտնել եւ պակասութիւններ։ Բայց ո՞վ կուրանայ, որ ժողովուրդը այդ երգերի մէջ է արտայայտում իր ուրախութիւնն ու վիշտը, հետեւաբար որ նրանք սրտի խօսքերն են, զգացմունքների թարգմաններ։

Բանաստեղծի ոգեւորութիւնը, որից վիշտ կամ ուրախութիւն է կաթում, կպչուն է, վարակիչ։ Նա ուրախանում է ինքն իրան, բայց յանկարծ դուրս է գալիս, որ շատ շատերն են ճիշտ նրա պէս ուրախանում. նա հառաչանքներ է արձակում իր սրտից, եւ յանկարծ դուրս է գալիս, որ դրանք ամենքի հառաչանքներն էին։ Իսկական բանաստեղծութեան յատկութիւնն է սա—լինել մարդկային սրտի հայելին։ Մենք տեսանք, որ Ռափայէլ Պատկանեանը համարեա մի տարի ապրեց Թիֆլիսում։ Այստեղ նա տեսնում է ժողովուրդը, ըմբռնում է նրա լեզուի անթարգմանելի փափկութիւնն ու ճկունութիւնը եւ երեք սիրուն ոտանաւոր է գրում Թիֆլիսի բարբառով—«Աղէն տմնն է», «Թիֆլիսի քէֆ», «Փափ եւ Շահզադէ»։ Պատկանեանը, եթէ չենք սխալվում, առաջին հայ գրողն էր, որ գործածեց Թիֆլիսի գաւառաբարբառը, լաւ հասկանալով, որ վերածել նրան գրականական լեզուի՝ նշանակում է ոչնչացնել տեղային առանձնայատուկ, օդի եւ ջրի, կեանքի ու սովորութիւնների մէջ ձուլված համն ու հոտը, ամբողջ աղը, համեմը։ Եւ իրաւ. ինչ կը ստացվէր, եթէ գրականական լեզուով գրված լինէր, օրինակ, «Թիֆլիսի քէֆը»։ Փորձեցէք վերածել...

Այստեղ ուրախ, սրտաբաց Թիֆլիսեցին է իր քէֆով։ Մի ուրիշ տեղ («Աղէն տմնն է») աշխարհի անարդար բանները դատափետող երգիծանքն է, որի մէջ հազիւ թէ արեւելեան հայ բարբառներից որ եւ է մէկը կարողանայ Թիֆլիսի բարբառի պէս հարուստ, կծու ու կտրուկ լինել։

Մենք, ի հարկէ, չենք ասում թէ Պատկանեանը շատ լաւ իւրացրել էր Թիֆլիսի հայերէնի բոլոր նրբութիւնները։ Ընդհակառակն, երեւում է, որ նա օտար մարդ է, Սունդուկեանց չէ։ Բայց մենք ուզում ենք այստեղ շեշտել մի հանգամանք, որ շատ մեծ նշանակութիւն ունի Պատկանեանի ոտանաւորի տեխնիկայի տեսակէտից։ Մինչդեռ նրա ժամանակակից գրողները,—Նազարեանց, Նալբանէ), պարզ յայտնի է, որ ընկերութիւնը այժմ ոչինչ վնաս չէ անում։

Երբ երկու կոպէկի ժամանակ ընկերութիւնը գոյութիւն էր պահպանում, անշուշտ վեց կոպէկով երեք անգամ լաւ գոյութիւն կունենայ, դեռ չը մոռանանք հաշւել եւ այն, որ 90—95 թւականներին ընկերութիւնը ունենում էր ընդամենը տարեկան 3—5 միլիօն պուդ նաւթ, այն ինչ միայն ութ ամսում ստացել են 12 միլիօն պուդ։ Անցեալ տարի ընթացիկ ծախսերից դուրս ընկերութիւնը արտակարգ ծախս ունեցել է կէս միլիօն րուբլուց աւել եւ էլի կարողացել է բաժանել 25% դիվիդենդ, որ երկու միլիօն հիմնական դրամագլխին անում է 500 հազար րուբլի։ Այն ինչ այս տարի ստանում է աւելի նաւթ, չունի ոչ մի կոպէկ արտակարգ ծախս, ընթացիկ ծախսերն էլ կրճատվել են եռապատիկ, ուրեմն եւ համեմատութեամբ այս ամենի, նաւթի կրկնակի պակաս գինը ընկերութեան ոչ մի վնաս պատճառել չէ կարող։ Ի հարկէ, անշուշտ լաւ կը լինէր, որ նաւթի գինը իր բարձրութեան վրա լինէր, այն ժամանակ ընկերութիւնը հինգ անգամ աւելի վաստակ կունենայ.—սակայն պէտք է հաշտվել իրերի դրութեան հետ եւ գոհ լինել թէկուզ 10% վաստակով։ Այն ինչ մեր առաջ բերած հաշիւները վկայում են, որ դրա կրկնակին կը ստացվի տարվայ վերջը։

Սակայն ընկերութիւնը ոչ միայն կրճատում է ծառայողների թիւը, այլ եւ պակասեցնում է ռոճիկները։ Միթէ սա անխղճութիւն չէ։ Մի ընկերութիւն, որ կառավարիչներին վճարում է 20 հազարական րուբլի ռոճիկներ ամենափառաւոր յարմարութեամբ հանդերձ, մի ընկերութիւն, որի լիազօր տէրերը չեն զլանում տարեկան մի քանի տասնեակ հազարներ գրպանները դնելու իբր ռոճիկ, ի հաշիւ ընկերութեան, մնալով մի եւ նոյն ժամանակ ընկերութեան տէրեր, այժմ առանց ամօթի բակում են ձեռնամուխ լինել թշուառ մարդկանց ողորմելի կոպէկներին, որ առանց այդ էլ չնչին է ու հազիւ է բաւականութիւն տալիս։ Եւ դեռ մի մոռանաք, որ այս ծրագիրը կազմել են համալսարանաւարտ ինժեներները չը մոռանալով մի շարք ոսկեզօծ չողոքորթութեամբ համոզել հրամայող տէրերին, որ իրանց ռոճիկները, 20 հազարները, մնան անձեռնմխելի։

Միլիօնների տէրերը, ամսական ինչ-որ մի հազար րուբլի տնտեսելու նպատակով, ձեռք են մեկնում սեւ քրտինքով կեղտոտված բանւորի կոպէկներին։ Ի՞նչ կասէք։

Բարս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 28-ին

«Մշակի» № 208-ում դերասան Գ. Պետրոսեան «Լսեցէք եւ մեզ» յօդուածում՝ այս տարի Թիֆլիսում եւ Բագւում մշտական հայերէն ներկայացումներ չը լինելու մեղքը գցում է Թիֆլիսում նոր հիմնված հայ թատրօնական ընկերութեան վրա։

Որովհետեւ ամառվայ ընթացքում, այսինքն այն ժամանակ, երբ իսկապէս վճռվում էր, թէ այս տարի հայ դերասանական խումբ պահվելու է Թիֆլիսում թէ ոչ, պ. Ց. Տիգրանեան ու ես էինք հայ թատրօնական ընկերութեան լիազօրները եւ որովհետեւ պ. Պետրոսեան իր յօդուածում ակնարկում է նաեւ իմ «Արձագանքները (տ. «Մշակ», № 176), ես իմ պարտքս եւ իրաւունքս եմ համարում մի քանի խօսք ասել հարցը լուսաբանելու համար։

Այս գարնան մի քանի անձինք, որոնք շատ հեռու են հարուստ լինելուց, ցանկանալով մշտական հայկական բեմ վերահաստատել Թիֆլիսում, շահագրգռեցին այդ գործով մի խումբ մարդկանց, որոնք, ընդհանրապէս անձամբ շատ հարուստ չը լինելով, պատկանում են սակայն հարուստ դասակարգին։

Այդ միացած խումբը վճռեց հիմնել հայ թատրօնական ընկերութիւն առեւտրական ընկերութեան հիմունքներով, հաստատ իմանալով, որ անկարելի է հիմնել հայ թատրօնական ընկերութիւն բարեգործական հիմունքներով։

Առեւտրական ասելով՝ չը պէտք է կարծել, թէ հիմնադիրներից որ եւ է մէկը ուզում էր շահաբաժիններ ստանալ այդ գործից, այլ միմիայն այն, որ ցանկալի էր համարվում մի քանի տարի գործը վնասով տանելուց յետոյ՝ հասցնել հայ թատրօնը վերջապէս այն դրութեան, որ նա ինքը պահպանէր իրան,—մի բան, որ եւ նորմալ է, եւ պատուաբեր բեմական գործիչների համար։

Ընկերութեան նախաձեռնողներից ոմանք անպայման անկարող էին մեծ նիւթական զոհողութիւններ անել այդ գործի համար։ Նրանից մնում էր կամ բաւականանալ այն զոհողութիւններով, որ իրանք կարող էին տանել եւ որ միւսները կամենում էին անել, եւ այդպիսով հիմք դնել մի համակրելի գործի, կամ թէ հրաժարվել բոլորովին հայ մշտական բեմ հաստատելու մտքից, թողնելով այդ այն հրաշագործ պարոններին, որոնք ոչ միայն ընդունակ են իրաւամբ մեղադրել հայ հարուստներին, այլ եւ կարող են համոզել նրանց, որ նրանք այն չափով նպաստեն հասարակական գործերին, ինչ չափով որ յիրաւի պարտական են։

Մենք լաւ գիտէինք, որ մեր մէջ այդպիսի հրաշագործ անձնաւորութիւն չը կայ, մենք հաստատ համոզված էինք, որ Թիֆլիսի հարուստները, դժբաղդաբար, չեն ուզենայ աւելի վնաս կրել հայ թատրօնի պատճառով, քան Բագուն, ուստի եւ կարծում էինք, թէ դերասանների ռոճկի նկատմամբ պէտք է առայժմ բաւականանալ այն նորմայով, որ մի քանի տարվայ ընթացքում, հետզհետէ փոքր ինչ աւելանալով, հաստատվել էր Բագւում։

Ի՛նկատի ունենալով այդ բոլորը, ինչպէս նաեւ բագուեցիների վճիռը՝ չաւելացնել այս տարի դերասանների ռոճիկները, մենք առաջարկեցինք այն դերասաններին, առանց որոնց բեմ պահվել չէր կարող, ստանալ Բագւում այնքան, ինչքան ստանում էին անցեալ տարի, իսկ Թիֆլիսում, ուր կեանքը շատ աւելի էժան է եւ ուր ամսական աւելի քիչ ներկայացումներ էին տրվելու, քան Բագւում, ստանալ համեմատաբար պակաս ռոճիկ։ Առաջնակարգ դերասաններից մի քանիսին էլ չը կարողացանք դիմել, հասցէները չիմանալու պատճառով, ոմանց էլ չը դիմեցինք, որովհետեւ արդէն պարզ էր, որ համաձայնութեան չենք գալու նրանց հետ, որոնց հետ արդէն սկսել էինք բանակցութիւններ։

Աւելորդ եմ համարում այստեղ առաջ բերել այդ բանակցութիւնները՝ մասամբ ընթերցողներին չը ձանձրացնելու, մասամբ էլ անձնաւորութիւններ չը շօշափելու համար։ Սակայն չեմ կարող, ցաւ ի սիրտ, չարձանագրել մի փաստ, այն, որ պ. Պետրոսեան իր յօդուածում թոյլ է տուել իրան այնպիսի բաներ, որոնք աններելի են բարեխղճութեան տեսակէտից։

Գ. Պետրոսեան գրում է, թէ ինքը չէ կարողացել հաստատ տեղեկութիւններ հաւաքել տիկ. Մայսուրեանցի արած պահանջների մասին, մինչդեռ ես ինքս անձամբ հաղորդել եմ նրան, կարելի է ասել, պաշտօնական տեղեկութիւններ, որ կարող եմ հաստատել վաւերաթղթերով. եւ ինքը, պ. Պետրոսեան, այդ դէպքում համակարծիք է եղել ինձ հետ։

Գ. Պետրոսեան գրում է, թէ օր.օր. Ֆէլէկեանները բոլորովին չեն պատասխանել մեր առաջարկութեանը, այսինքն թէ նրանց կողմից մերժում չէ եղել, մինչդեռ պ. Պետրոսեանին շատ լաւ յայտնի է, որ մեր առաջարկութեան մէջ գրված էր, որ եթէ մինչեւ օգոստոսի այս ինչ թիւը պատասխան չը ստանանք, կը նշանակէ, թէ մեր առաջարկութիւնը մերժվում է։

Գ. Պետրոսեան գրում է. «պ. Արաքսեան հեռագրել է, թէ ծառայում է կնոջ հետ... Գ. Արաքսեանի պատասխանը մեծ պահանջ չէ. գուցէ (ինչպէս է ձեզ դուր գալիս այդ «գուցէ»-ն) նրա կինը ծառայում է հայ բեմին եւ կարեւոր ոյժ է»։ Եւ նոյն պ. Պետրոսեան իր յօդուածը գրելուց մէկ երկու օր առաջ իմ հարցին, թէ իրանց դերասանական խմբի մէջ ինչու այժմ չը կայ պ. Արաքսեան, պատասխանեց,—«Նա անպատճառ ուզում է ծառայել իր կնոջ հետ, իսկ կինը՝ դերասանուհի չէ»։

Աւելացրէք դրա վրա այն, որ պ. Պետրոսեան շատ դժգոհ է, որ իրան չեն դիմել եւ երբ բացատրում են, թէ իրան չեն դիմել, որովհետեւ ինքը արդէն պայման էր կապել մի ռուս գաւառական խմբի հետ, զարմանում է, թէ ո՞րտեղից են վերցրել այդ, մինչդեռ պ. Պետրոսեան իր ձեռքով այդ բանը գրել է Բագուի լիազօրին. (պ. Գ. Պետրոսեանին չը դիմելու պատճառներից մէկն էլ այն էր, որ մտադրութիւն կար, ռուս դերասան Պրավդինի խորհուրդով, ռէժիսէօր հրաւիրել պ. Գ. Պետրոսեանի եղբօրը՝ պ. Քրիստափոր Պետրոսեանին, որ, պ. Պրավդինի ասելով, տաղանդաւոր դերասան է, այնպէս որ նա ոչ միայն կարող էր փոխարինել իր եղբօրը, որ տաղանդաւոր չը լինելով այնուամենայնիւ շատ օգտակար ոյժ է, այլ եւ մի գիւտ կը լինէր հայ բեմի համար, մինչդեռ բագուեցիները անհնար էին համարում, կարգապահութեան տեսակէտից, հրաւիրել խմբի մէջ մեծ եղբօրը իբրեւ դերասան, իսկ փոքրին իբրեւ ռէժիսէօր)։

Աւելացրէք եւ այն, որ հայ դերասանները, ռուս գաւառական լաւ դերասանների չափ ստանալով, խաղում են շատ աւելի քիչ անգամ, քան ռուս դերասանները, այսինքն ամիսը 6 անգամ, իսկ ոմանք 4 անգամ խաղալու համար ստանում են այնքան, որքան ռուս դերասանները ստանում են ամիսը 10—15 անգամ խաղալու համար եւ այլն, եւ որ հայ դերասանը անպայման աւելի շատ է ստանում քան հայ գրողը եւ ուսուցիչը, եւ կը տեսնէք, որ Թիֆլիսի հայ թատրօնական ընկերութեան նախաձեռնողները, անշուշտ, արժանի չեն արձան կանգնեցնելու, բայց եւ այնքան էլ խաչ հանելու անձնաւորութիւններ չեն, որքան աղաղակում են այն պարոնները, որոնք «չը գիտեն, թէ ինչ են անում»։

Հետաքրքրական է մի հարց։ Ի՞նչ կանէր ինքը պ. Պետրոսեան, եթէ կիսով չափ հարուստ, կիսով չափ ոչ հարուստ անձերից բաղկացած մի խումբ, երաշխաւորելով 20 ներկայացման համար 2,000 ր. վնաս, առաջարկէր նրան կազմել հայ դերասանական խումբ։ Կը սկսէր արդեօք հայհոյել նրանց, թէ կը համաձայնէր եւ, ըստ այնմ, նշանակելով ռոճիկներ, կը խնդրէր իր ընկերներին տանել գործը, մինչեւ որ ապացուցվի, որ այդքան վնասով աւելի ռոճիկներ կարելի է տալ կամ մինչեւ նրան յաջողէր համոզել այդ խմբի անդամներին, որ աւելի վնաս յանձն առնեն։ Եւ եթէ պ. Պետրոսեան այդպէս վարվէր, ինչ կը մտածէր նա այն պարոնների մասին, որոնք այդ բանի համար վեր կը կենային ու կը հայհոյէին նրան անստորագիր նամակներով եւ մեծաստորագիր յօդուածներով։

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցաւ Օգոստափառ Հիւրերին պատւելու համար պատրաստած նախաճաշ, որ տուեց Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը։ Հրաւիրված էին 700 հիւրեր, որոնց համար սեղան էր պատրաստված կլուբի դահլիճներում։ Բացի դրանից բակում նախաճաշ էր պատրաստված 400 հոգի՝ համքարների համար։ Ժողովարանի դահլիճները կահաւորված եւ զարդարված էին շքեղ կերպով։ Բազմաթիւ ծառեր, կանաչեայ պարաններ եւ ծաղկեայ փնջեր տալիս էին սենեակներին եւ սեղաններին գեղեցիկ կերպարանք։ Հիւրերը եկան նախաճաշի ուղիղ ժամի 12½-ին։ Քաղաքագլխի պաշտօնակատար Շեստակով քաղաքային ձայնաւորների հետ միասին ժողովարանի մուտքի առաջ ընդունեց Բարձր Հիւրերին եւ առաջնորդեց մինչեւ վերեւ։ Կենտրոնական դահլիճում Օգոստափառ Հիւրերը նստած էին բարձրաստիճան անձանց եւ հիմնարկութիւնների ներկայացուցիչների հետ։ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ բռնել էր ճակատի սեղանի մէջտեղը, նրա ձախ կողքին նստած էին յունաց թագուհի Օլգա Կոնստանտինովնա, ապա կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին, Մեծ Իշխանուհի Ելենա Վլադիմիրովնա, Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչ, հայոց կաթողիկոս Մկրտիչ I, որի թարգմանն էր Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան։ Մեծ Իշխանի ձախ կողմից նստած էին Մեծ Իշխանուհի Մարիա Գէոր-

---

գեանց,—աշխատում էին պարզ աշխարհաբար ստեղծել, բայց սաստիկ նախապաշարված էին մեր գաւառաբարբառների վերաբերմամբ, խուսափում էին նրանցից՝ աւելի գրաբարից ոճեր ու ձեւեր փոխ առնելու համար, Ռափայէլ Պատկանեանը, ընդհակառակն, ամբողջ սրտով ձգտում էր դէպի ժողովրդական անարուեստ լեզուն եւ այնտեղից վերցնում էր այն ամենը, ինչ նրա բանաստեղծական հոտառութիւնը լաւ էր համարում միտք արտայայտելու համար։ Այս բանի մէջ նա ցոյց է տուել մի համարձակութիւն, որպիսին չէ ունեցել ոչ մի հայ բանաստեղծ։ Գաւառաբանութիւնները, թուրքերէն բառերը, երբեմն նաեւ գրաբար դարձուածքները այնպէս են տեղաւորված Պատկանեանի բանաստեղծութիւնների մէջ, որ կարծում էք թէ առանց դրանց չէր էլ կարող լինել նրա ինքնատիպ, ազդու, յաճախ փայլուն ոտանաւորը։

Ժողովրդական բանաստեղծութեան մի նմուշ է, թէեւ, տարաբախտաբար, կիսատ մնացած, «Բեռո օղլին», որի մէջ հետաքրքրական մոտիվներ են հայ աշուղը, նրա հերոսները, ունկնդիր ժողովրդի տրամադրութիւնը։ Այս պօէմայի մէջ Պատկանեանը կամեցել է ժողովրդական աշուղ դառնալ թէ լեզուով, թէ պատմելու ձեւով. բայց, ի հարկէ, նա այն աշուղներից չէ, որոնց երգերը, մեծ մասամբ անհամ ու արհեստական, տպվում էին յիսնական թւականներին։ «Բեռո-օղլին» պիտի լինէր մի ժողովրդական դիւցազներգութիւն։ Ի՞նչպէս պիտի այդ գործը գլուխ բերէր մեր բանաստեղծը,—չը գիտենք։ Բայց այնպիսի գեղեցիկ կտորներ, ինչպէս են «Աշուղ», «Բեռո-օղլուի սազը», «Լսէ, իմ որդի», վկայութիւններ են, որ ժողովրդական պօէմայի մէջ էլ Պատկանեանի տաղանդը կարող էր փայլել։

Բայց այդ փայլը մենք որոնենք բանաստեղծի սիրած աշխարհում, այնտեղ, ուր նա ունի իր առջեւ ազգ ու ազգութիւն։ Ուսանողական ժամանակի նրա բանաստեղծութիւնները հասարակական-ազգային որպիսի գեղեցիկ գաղափարներ են ցոլացնում իրանց մէջ։ Բաւական չէր բանաստեղծ լինելը, պէտք էր լինել եւ ժամանակի առաջաւոր, լայն հայեացքների տէր մարդկանցից մէկը։ Այստեղ է երեւում Ռափայէլ Պատկանեանի նշանակութիւնը յիսունական եւ վաթսունական թւականների մեր մտաւոր շարժման տեսակէտից։

Մի ժամանակ էր դա—եւ միթէ այժմ էլ անցել է այդ ժամանակը—երբ հայութեան նշանները որոնվում եւ ճանաչվում էին միայն արտաքին ծէսերի, հագուստի, ընտանեկան եւ կրօնական աւանդապահութեան մէջ։ Եւրոպական լայն գաղափարներով տոգորված մեր գործիչները արդէն հալածում էին այդ տեսակ հայրենասիրութիւնը։ Եւ ահա Ռափայէլ Պատկանեանն էլ դնում է իր խրոխտ, հեգնական հարցը.

Ո՞վ է հայը. մի՞թէ նա է, որ խօսում է հայ լեզուով,
Եւ կամ՝ որի մականունը յանգում է «եան» մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տօլմա ու փլաւ,
Կամ պարծանօք միշտ հագնում է հայի գըդակ ու հալաւ։

Իսկական, լայն հասկացված հայրենասիրութեան մի ճառ է դա, որի իւրաքանչիւր տողը յաւիտենական ճշմարտութիւն կը մնայ.

Թէ դու հայ ես՝ հայութիւնդ պիտի յարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի յուսոյ աստղը քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց դու հայի օգուտները միշտ վե՛ր դասէ ամենէն։
Արուեստ, ուսում, շըքեղարուեստ տարածէ՝ հայ ազգի մէջ,
Բայց բընութեամբ միշտ հեռացո՛ւր նորա մէջէն կրօնի վէճ...
... Սիրէ՛ ազգդ ո՛չ լոկ խօսքով, սիրէ՛ ինչպէս քու անձը,
Նորա օգտին, թէ պէտք լինի, զոհէ՛ բոլոր քու գանձը.
Մի՛ խնայել կեանքդ անգամ, արիւնդ բե՛ր նորան զոհ.
Ո՛չ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզնից գոհ։

Բնական է, որ այսպիսի գաղափարներ քարոզող բանաստեղծը յարձակվէր օտարացած, ազգային որ եւ է պարտաւորութիւն չը զգացող հասարակութեան վրա։ Եւ Պատկանեանը անխնայ հարուածում է այն հայերին, որոնք բարեկրթութեան, ազնուականութեան, լուսաւորութեան նշան են համարում իրանց ազգն ու լեզուն մոռանալը։ Դուք, ի հարկէ, շատ լաւ յիշում էք երկու սուր երգիծաբանական ոտանաւորները—«Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ», «Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ»։ Ռափայէլ Պատկանեանն էր, որ առաջին անգամ մեզանում այնքան գեղեցիկ կերպով բնորոշեց, ձեւակերպեց հայի ամենավատ յատկութիւններից մէկը—

Տեղը եկա՛ւ հայ է նա, տեղը եկա՛ւ այլազգի,
Իրօ՛ք ոչ այդ և ոչ այն է, այլ ծնունդ մի նոր ազգի։

Հրէշաւոր տիպ. եւ որպիսի վարպետութեամբ է նկարել նրան մեր բանաստեղծը։ Որքան ճշմարտութիւն, կեանք, յարատեւութիւն կայ նրա մէջ։ Այդ երկու ոտանաւորները գրվեցին 1856—1857 թւականներին։ Նայենք այժմ մեր շուրջը. կարո՞ղ ենք նրանցից գոնէ մի տող ջնջել իբրեւ այլ եւս գոյութիւն չունեցող արատի նկարագիր։ Ընդհակառակն։ Այժմ որքան տարածվել է այդ տիպը. այժմ մայրաքաղաքներ չեն հարկաւոր՝ հայ երիտասարդին եւ հայ աղջկան այդպէս «կրթելու» համար։ Այժմ այդ կրթութիւնը մտել է մեր ընտանիքի ծոցը, հասել է մինչեւ իսկ մեր գաւառների խորքը եւ այնտեղ կրծում ու ոչնչացնում է մեր գոյութեան հիմքն անգամ—մեր ժողովուրդը։ Հասկանալի է, ուրեմն, թէ ինչ նշանակութիւն ունեն մեզ համար երկու ոտանաւորներն էլ. դրանց մէջ իսկական բարձր բանաստեղծութիւն չը կայ. բայց կայ եւ շատ կայ հառաչանք, ծաղրի միջից կաթող աղի արտասունք...

Ազգային անբարեխղճութեան, վատ բարքերի պարսաւանք է եւ «Բարի խրատը», որ բանաստեղծը նուիրել է իր հօրը, Գաբրիէլ քահանայ Պատկանեանին։ Դա հայ հեղինակի մորմոքն է.

Դեռ չի գրած՝ առաջ դու լա՛ւ միտք արա,
Ո՞վ է խեղճիդ գըրուածքները առնողը.
Յետոյ՝ և այն մասին փոքր ինչ հո՛գս արա,
Որ քեզ սիրէ քու յարգելի կարդողը։

Բայց ինչ տեսակ հեղինակն է այնպիսի թշուառ դրութեան մէջ։ Այն հեղինակը, որ չէ շողոքորթում ընթերցողին։ որ հայի տխուր կեանքն է ճիշդ նկարագրում, որ պարսաւում է հայի գործերը, որ ծաղրում է «տխմար գործերը», հայրենական աւանդութիւններ համարվող գործերը։

Մի՛ դու հային իր խոր քնէն արթնացնիլ,
Բարոյական քունը նորա անուշ է.
Կամ անցեալը նորա առջև մի յիշիլ
Այդ անցեալը նորա աչքին սուր փուշ է.
Գովէ՛ նորա այն սխրալի արարքը,
Որ խեղճ հայը երազումն էլ չի արել,
Նորա ամօք բնութիւնը ու բարքը
(Սուտ պարծանքը հայերի խելքն է տարել)

Այսպէս է եւ այժմ, այս է եւ ներկայ հայ պակասութիւնը։ Նոյն այդ ցաւին է նուիրված եւ «Անկապիչ, անձայն, խորհուրդ ճակատի գեղեցիկ բանաստեղծութիւնը։

(Կը շարունակվի)

գիեվնա, Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, Վրաստանի եւ Իմերէթի էկզարխ Ֆլավիան, յունական արքայորդի Անդրէյ, կովկասեան կառավարչապետի օգնական Ֆրեզէ։ Օգոստափառ Հիւրերի դէմ յանդիման նստած էին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Շեստակով եւ ուպրավայի անդամ Ձերքեզով, այնուհետեւ զանազան հիւրեր։ Նախաճաշի ժամանակ կենացներ առաջարկվեցին՝ նախ Թագաւոր Կայսրի, ապա Թագուհի Կայսրուհու եւ Թագաժառանգի, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի, յունական Թագուհու եւ ներկայ Օգոստափառ Հիւրերի։ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ առաջարկեց Թիֆլիս քաղաքի կենացը։ Ապա առաջարկեց կառավարչապետ իշխան Գոլիցինի կենացը, որը իր կողմից առաջարկեց նորից խմել Թիֆլիս քաղաքի եւ նրա ներկայացուցիչների կենացը։ Այնուհետեւ քաղաքագլուխը առաջարկեց Վրաստանի էկզարխի եւ հայոց Կաթողիկոսի կենացները եւ վերջումը ներկայ եղող հիւրերի կենացը։ Օգոստափառ Հիւրերը նախաճաշից յետոյ նայեցին համքարներին, որոնք նստած էին ծալապատիկ սփռոցի շուրջը սազանդարներով հանդերձ եւ մեկնեցին դէպի պալատ։ Թիֆլիսի ժողովարանի առաջ խռնված էր մեծ բազմութիւն, որը ողջունում էր Օգոստափառ Հիւրերի գալը եւ գնալը ուռաներով։

—

Երէկ, սեպտեմբերի 28-ին, $10^1/_2$ ժամին, Նորին Կայսերական Բարձրութիւններ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ եւ Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչ այցելեցին Նորին Վեհափառութիւն ամենայն հայոց Կաթողիկոսին առաջնորդարանում։ Մեծ Իշխանը խօսակցեց Կաթողիկոսի հետ Վանքի բակում թաղված հայ գեներալների եւ Էջմիածնի տաճարի մասին։ Մեծ Իշխանները, կէս ժամ մնալով Նորին Վեհափառութեան մօտ, դուրս եկան առաջնորդարանից եւ նայեցին Լօրիս-Մելիքօվ, Տէր-Ղուկասօվ, Շելկովնիկօվ, Լազարեվ, Ալխազեվ, Բիչմիչեվ գեներալների մահարձանները եւ ապա ուղեկցված ժողովրդի սրտագին եւ ջերմ «ուռաներով» ուղեւորվեցին պալատ։

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 27-ին, Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին՝ Կովկասեան կառավարչապետի պալատում, ներկայացան Թիֆլիսի «Կրուժոկի» աւագների խորհրդի անդամները։ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ պատուաւոր անդամ է «Կրուժոկում»։

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 27-ին, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ եւ Նորին Մեծութիւն յունաց Թագուհի Օլգա Կոնստանտինովնա այցելեցին Թիֆլիսի կադէտների կորպուսը, ուր ներկայ եղան աշակերտների նախաճաշին։ Կորպուսից մեկնելու ժամանակ, կադէտները ճանապարհ դրին Բարձր Այցելուներին մինչեւ կառավարչապետի պալատը։

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 27-ին, Վրաստանի էքզարխ Ֆլավիան արքեպիսկոպոսը՝ չորս եպիսկոպոսների ուղեկցութեամբ, այցելեց Կովկասեան ցուցահանդէսը, որտեղ նրան դիմաւորեցին եւ բացատրութիւններ տուին Սուլտան-Կրիմ-Գիրէյ եւ ցուցահանդէսի կոմիսար իշխան Անդրոնիկով։

—

Հաղորդում ենք մի քանի մանրամասնութիւններ հինգշաբթի, սեպտեմբերի 27-ին, տեղի ունեցած յօբելեանական հանդէսների մասին։ Ձիարշաւի հրապարակում, ինչպէս հաղորդել էինք երէկ, կառավարչապետ իշխան Գոլիցին ճաշ տուեց կովկասեան ազգաբնակութեան ժողովրդական ներկայացուցիչներին եւ կովկասեան պատերազմների վէտերան-զինուորներին։ Իշխան կառավարչապետը, Բարձրագոյն Հիւրերի գալուց յետոյ, անցնելով հրապարակի մէջտեղը, ուր երկար շարքերով սեղաններ էին պատրաստված ժողովրդական ներկայացուցիչների համար, նախ առաջարկեց Թագաւոր Կայսրի եւ Նրա Բարձր Ներկայացուցիչ Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի կենացը, որոնք ընդունվեցին բուռն ոգեւորութեան աղաղակներով ներկայ եղողների կողմից, եւ ապա արտասանեց հետեւեալ բաժակաճառը. «Խմում եմ այն բոլոր ազգութիւնների կենացը, որոնք ապրում են Կովկասում, առանց ցեղի եւ դաւանութեան խտրութեան։ Թող միշտ նրանց մէջ թագաւորէ փոխադարձ սէր, միութիւն եւ խաղաղութիւն։ Թող օրհնէ Աստուած նրանց խաղաղ աշխատանքը ի բարգաւաճումն մեզ բոլորիս սիրելի Կովկասի՝ մեզ բոլորիս հարազատ մայր-Ռուսաստանի համար»։ Ապա Բարձրագոյն Հիւրերը, ուղեկցութեամբ իշխան կառավարչապետի, այցելեցին այն բոլոր սեղանները, որտեղ նստած էին ժողովրդական ներկայացուցիչները եւ արժանացրին նրանցից շատերին հարց ու փորձի։ Ժողովրդական ներկայացուցիչների մէջ կային հայեր, վրացիներ, իմէրէլներ, գուրիացիներ, մէնգրէլներ, թուրքեր, սվանէտցիներ, աջարներ, աբխազներ, թուշեր, խէվսուրներ, քիստեր, յոյներ, գերմանացիներ, օսեր, մօլօկաններ, քրդեր, լէզգիներ, մթիուլներ եւ փշաւներ։

—

Թիֆլիսի եղանակը վերջապէս պարզվեց եւ ամբողջ տասնօրեայ անձրեւային եւ ամպամած եղանակից յետոյ երկինքը նորից բացվեց եւ օդը զգալի կերպով տաքացաւ։

—

Կովկասեան ցուցահանդէսում սեպտեմբերի 27-ին եւ 28-ին տեղի ունէր պանիրների քննութիւն եւ գնահատութիւն։ Յանձնաժողովը կարողացաւ քննել միայն եւրօպական պանիրները։ Հետեւեալ շաբաթվայ ընթացքում քննութեան կենթարկվեն կաթնային միւս արդիւնքները եւ գործիքները։

—

Այսօր, սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութեան դահլիճում դաշնակահարուհի Չերնեցկայեա կը տայ մի կոնցերտ, որ կազմված է յայտնի կոմպոզիտորների հեղինակութիւններից։ Երաժշտական քննադատները գովասանքով են խօսում Չերնեցկու մասին, արձանագրելով նրա լաւ խաղը եւ հեղինակելու ընդունակութիւնը։ Կովկասցիների համար որոշ հետաքրքրութիւն ունի այն հանգամանքը, որ Չերնեցկայա առանձին ճաշակ եւ հմտութիւն է ցոյց տալիս արեւելեան եղանակների եւ մեղեդիների վրա հիմնված երաժշտական հեղինակութիւններում։

—

Սեպտեմբերի 21-ին վախճանվեց Մոսկվայում պետական խորհրդի անդամ Ն. Աբազա, որ Ալէքսանդր II-ի ժամանակաշրջանի նշանաւոր գործիչներից մէկն էր։ 1880 թւին, կոմս Լօրիս-Մելիքօվի ժամանակ, Ն. Աբազա կատարում էր մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարչի այն ժամանակ խիստ դժուար պաշտօնը։ Ն. Աբազա, իր կարճատեւ պաշտօնավարութեան ընթացքում, որ տեւեց մի տարուց էլ պակաս, նշանաւոր չափով թեթեւացրեց մամուլի դրութիւնը եւ շատ պարբերական հրատարակութիւնների թոյլատւութիւն տուեց։

—

Քաղաքային կանոնադրութիւնը վերաքննելու համար ներքին գործերի մինիստրութեան կից կազմված յանձնաժողովը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, կը սկսէ իր զբաղմունքները հոկտեմբերի 1-ից։

—

Կառավարչական սենատը բացասական մտքով վճռեց այն հարցը, թէ արդեօք իրաւունք ունի բժիշկը, իր պաշտօնական պարտաւորութիւնները պատրուակ բերելով, հրաժարվել վըտանգաւոր հիւանդին այցելելուց։

—

Վարշավայի առեւտրականները, «Приб. Кр.» լրագրի խօսքով, մտադրութիւն ունեն արտասահմանեան ապրանքները բացառապէս Ֆրանսիայում գնել եւ իրանց բոլոր յարաբերութիւնները դադարեցնել գերմանական գործարանատէրերի հետ այն պատճառով, որ պրուսական կառավարութիւնը հալածում է սլավոնական ազգերը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հայկական նոր կոտորածի մասին տարածված լուրերի վերաբերմամբ թիւրք կառավարութիւնը, ի հարկէ, աշխատում է հաւատացնել, որ այդ բոլոր տեղեկութիւնները լրագրական առասպելներ են միայն եւ որ հայկական նահանգներում ամեն ինչ խաղաղ եւ հանգիստ է։ «Կ. Պօլսի գործակալութիւնը» յայտնում է, թէ հեղինակաւոր աղբիւրից ստացված տեղեկութիւններով, իրերի դրութիւնը Մուշում եւ Սասունում գտնվում է իր բնական շրջանում, թէ Մուշում երբէք տեղի չեն ունեցել այն ընդհարումները, որոնց մասին հաղորդում են լրագիրները։ «Կ. Պօլսի գործակալութեան» հանգստացուցիչ տեղեկութիւններին բոլորովին հակասում է այն հեռագիրը, որ ստացել է «Times» Կ. Պօլսից։ Այդ լրագրի թղթակիցը հաղորդում է, թէ դեսպանատներում հիւպատոսարաններից ստացված տեղեկութիւններին նայելով, դրութիւնը հայկական նահանգներում այնքան լուրջ է, որ դեսպանները անհրաժեշտ են համարում պետութիւնների միջամտութիւնը՝ այնտեղ այժմ կատարվող գազանութիւնների առաջն առնելու համար։

—Լօնդօնից հաղորդում են «Francfurter Zeitung» լրագրին, թէ երիտասարդ թիւրքերի կուսակցութիւնը իր կենտրոնական վարչութեան տեղը փոխելու է Պարիզից Լօնդօն, ուր եւ կը շարունակէ իր գրական գործունէութիւնը եւ պրօպագանդան թիւրքական այժմեան րէժիմի դէմ։

—Վերջին անախորժ տեղեկութիւնները հարաւ-աֆրիկական պատերազմական դաշտից,—գրում է «Новости» լրագրի թղթակիցը Լօնդօնից,—աւելի եւս սաստկացրին անգլիական ժողովրդի բարկութիւնն ու զայրոյթը այդ անվերջ պատերազմի դէմ։ Ամենքը հարց են առաջարկում միմեանց.—ինչպէս կարող էին պատահել հարաւային-Աֆրիկայում այնպիսի դէպքեր, որպիսիք վերջին դէպքերն էին, եւ որքան ժամանակ դեռ եւս կը տեւէ պատերազմը։ Լորդ Կիտչեներ փորձում է բացատրել անգլիացիների վերջին պարտութիւնները նրանով, որ անգլիացիները ստիպված են պատերազմ մղել ահագին տարածութիւն ունեցող մի երկրում, որ մի եւ նոյն ժամանակ եւ նոյնքան լեռնոտ է, որքան Շվէյցարիան։ Նրան պատասխանում են, որ այսուամենայնիւ նրա ձեռքի տակ գտնվող զինուորական ույժերը այնքան բազմաթիւ են, որ կատարելապէս հնարաւորութիւն կայ նրանց միջոցով յաղթել ամեն արգելքների։ Լորդ Կիտչեներ 250,000 զինուոր ունի այժմ 10—15,000 բօէրների դէմ։ Անգլիական զօրապետը սրա դէմ առարկում է, թէ այդ զինուորների մեծ մասը մի առանձին արժէք չէ ներկայացնում։ Նա առանձնապէս գանգատվում է իօմանրներից։ Ակներեւ է, որ այդ գանգատները հիմք ունեն, որովհետեւ War Office-ը յանձնարարել է գեներալ Կրօմմէրին ուշադրութեամբ վերաքննել ոչ միայն իօմանրների գնդերը, այլ եւ կանոնաւոր զօրքը։ Վերաքննութեան հետեւանքը Լօնդօնում սաստիկ ցաւալի էր։ Անցեալ շաբաթ տեղի ունեցան գվարդիայի մի քանի բատալիոնների զօրամարզութիւններ, որոնց ժամանակ ոչ միայն զինուորները, այլ նոյն իսկ օֆիցէրները մէկը միւսից յետոյ սխալներ էին գործում։ Հասարակութիւնը ինքը ականատես էր այդ հազուագիւտ տեսարանին,—կապիտանները անվերջ վիճում էին սերժանտ-մայօրների հետ, մի քանիսը բոլորովին շփոթվում էին այն շարժողութիւնների ժամանակ, որ կատարվում էին հէնց նրանց հրամանով, միւսները մեղադրում էին իրանց հրամանատարներին տգիտութեան մէջ։ Ինչ վերաբերում է իօմանրներին, նրանց գնդերը կատարեալ քաօս էին ներկայացնում զօրամարզութիւնների ժամանակ։

—«Francfurter Zeitung» լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պօլսից, թէ Թիւրքիան մտադրութիւն ունի իր ընդհարման գործը Անգլիայի հետ Կովէտում յանձնել Հաագայի միջնորդ դատարանին։ Ենթադրում են, սակայն, որ Անգլիան չի համաձայնվի այդ բանին։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

27 սեպտեմբերի

ՊԵՆԶԱ։ Սեպտեմբերի 27-ին ժամանեց հողաչափական բաժնի կառավարիչ սենատոր Շմէման սենատորական քննութիւն կատարելու ենթակայ հիմնարկութիւնների մէջ։

ԽԱՐԿՕՎ։ Կալուածական բանկի ակցիօներների ժողովը ընդունեց վարչութեան առաջարկութիւնը հին ակցիաները ոչնչացնելու մասին, փոխարինելով նրանց նորերով, այն հաշւով, որ փոխանակ վեց հների հինգ նոր ակցիաներ ստացվեն, 200 ր. արժողութեամբ իւրաքանչիւրը, կամ, ըստ ցանկութեան, փայատէրը ստանում է ակցիաների նոյն քանակութիւնը, բայց կրկին վճարելով 33 ր. 34 կ. իւրաքանչիւր ակցիայի համար։ Այդպիսով, ի լրումն 42729 ակցիաների, կը հրատարակվեն 7000 նոր ակցիաներ, եւ այդ պատճառով հիմնական դրամագլուխը կը հասցնվի մինչեւ 9,970,000 րուբլի։

ՎԱՐՇԱՎԱ։ Սեպտեմբերի 27-ին բացվեց հինգերորդ տարեկան պտղային տօնավաճառ, որը տասն օր է շարունակվելու։

ԿՐԱԴՕԿ։ Սեպտեմբերի 26-ին հրապարակ էին հանված զօրքերի ներկայութեամբ 53 ապստամբներ Կապի գաղթականութիւնից, որոնք գերի էին վերցված Լոտտէրի զօրաբաժնի հետ միասին՝ լսելու համար դատավճիռը, որով նրանք դատապարտված էին մահվան պատժի կախաղանի միջոցով։ Կիտչեներ սակայն փոխարինեց պատիժը ցմիշտ բանտարկութեամբ։

ՊԵԿԻՆ։ Պրինց Ցին գրաւոր խնդիրքով դիմեց բոլոր օտար դեսպաններին, պահանջելով բոլոր առեւտրական բնակութիւնները հեռացնել Պեկինից, որովհետեւ Պեկինը դաշնագրային նաւահանգիստ չէ։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրի Դէնդիից ստացած տեղեկութիւնների համեմատ, գեներալ Բօտա կատարելապէս ապահով չէ զգում իրան, այնուամենայնիւ նա, ըստ երեւոյթին, դուրս կը պրծնի զինուորական այն շղթայից, որը իսկոյն եւ եթ կազմվեց՝ նրա յետ նահանջումը արգելելու համար։ Բօտան առաջ է գնում զուլուսների երկրի սահմանի երկարութեամբ դէպի հիւսիս։ Կիրակի օրը նրան աջողվեց անցնել անգլիական զօրքերի գծից մօտաւորապէս իր պատերազմական ույժերի կէսով։

ՊԱՐԻԶ։ Թագուհի Նատալիայի մօտ շրջաններում կտրականապէս հերքում են կաթոլիկութիւն ընդունելու տեղեկութիւնը։ Նոյն առիթով «Temps» լրագրում տպված է ըստ երեւոյթին պաշտօնական հեռագիր Բէլգրադից, որի մէջ յայտնվում է, որ Նատալիա Թագուհին առաջվան պէս ուղղափառութեան եւ ռուս ազգին հաւատարիմ է։

Ֆրանսիական դիպլօմատիական շրջաններում անկասկածելի են համարում, որ Աբդուրահմանի ժառանգը կը լինի նրա աւագ որդի Խաբիբուլլա, որը բոլոր աւղանական նահանգապետների եւ օֆիցէրների համակրութիւնն է վայելում։

Ֆրանս-Թիւրքական ընդհարման մէջ մինչեւ այժմ ոչինչ փոփոխութիւն տեղի չէ ունեցել։

ԲԵԼԳՐԱԴ։ Կրուշէվայում, ուր հէնց նոր պատրաստութիւններ էին տեսնում արքայական զոյգին ընդունելու համար, պայթիւն տեղի ունեցաւ մի առեւտրականի անզգուշութեան պատճառով, որի խանութում մեծ քանակութեամբ վառօդ եւ դինամիտ կար։ Պայթիւնի պատճառով այրվեցին հարեւան 12 տներ եւ խանութներ։ Երեք մարդիկ սպանվեցին եւ 14 հոգի ծանր վիրաւորվեցին, որոնց թւում երեք ժանդարմներ։ Արքայական զոյգը յետաձգեց իր այցելութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Շաբաթ, սեպտեմբերի 29-ին,
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը,
մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ,
կը ներկայացնէ
ԷՐՆԱՆԻ
Դրամա 5 արարուածով, հեղ. Վ. Հիւգօյի,
Թարգմ. Ե. Տէր-Գէորգեանի
Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։
Տոմսակները ծախվում են Թատրոնի կասսայում։ 2—2

Ատամի եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ Ն. ԿԱՃԿԱՃԵԱՆ
վերադարձաւ եւ ընդունում է հիւանդներին։ Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի, «Ройновъ»-ի լուսանկարչական գործարանի տակը։
Эриванская площадь, домъ Харазова.
(Ե. հ. չ. կ.) 6—10

ՅՈՎՍԵՖ ՄԱԼՈՒՄԵԱՆՑԻ
ԲԱՂԴԱԴԻ ԾԵՐԱՄԻ ՍԵՐՄ
ՊԱՏՐԱՍՏԱԾ ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ
Целлюлярная грена, приготовленная по системѣ Пастера.
Կարելի է գնել՝ Тифлисъ, Лорисъ-Меликовская ул. д. № 11. Галусту Галустянцъ. կամ Черезъ Ордубатъ, село Мегры, Іоакиму Малумянцу. (շ) 11—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաքենիկ
ԾԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(հ. կ.) 10—60

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նախասարդեանց—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաքրատեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Խարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբույժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նախասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները, կամենում է տնային վարժուհու պաշտօն ստանալ Թիֆլիսում կամ այլ քաղաքում, 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկների հետ պարապելու համար։ Կը կամենար նաեւ կոմպանիօնկա լինել մի տիկնոջ։

Հասցէն՝ Театральная улица, Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами. Спросить казначея Петрова. 6—6

ՓՈՐՁՎԱԾ ԽՄԲԱՊԵՏ

Ցանկանում է, քառաձայն կամ եռաձայն, կանոնաւոր խումբ կազմել քաղաքիս եկեղեցիներից մէկում, ձեռնտու պայմաններով։

Հասցէները թողնել՝ Երեւանեան հրապարակի վրա, Միրիմանեանի խանութում, հաշւապահի մօտ։ 2—3

„ՎՏԱԿ" ժողովածուն լոյս տեսաւ եւ վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում։ Գինն է 1 ր. 50 կ., փառակազմ՝ 1 ր. 90 կ., 2 ր., 2 ր. 25 կ.։

Նոյն տեղը ստացվել են եւ հետեւեալ նոր գրքերը՝

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ. Մատենագրութիւն Նախնեաց, Թ. 1901 Թ., գ. 1 ր. 50 կ.։

Ս. ԷՋՄԻԱԾՆԱՑ ՕՐԱՑՈՅՑ 1902 Թ. գ. 20 կ.

Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջում է լինում։

Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (շ.) 2—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՑՈՒԻԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուխերը, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագւում. Նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։ 78—100

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Շաբաթ, սեպտեմբերի 29-ին,
տեղի կունենայ

ԿՕՆՑԷՐՏ

յայտնի ջութակահար
Ր. Ի. ՋԷՐՆԷՑԿԱՅԵԱՅԻ

Տոմսակները կարելի է ստանալ Սուզանտճեանի երաժշտական գործիքների խանութում։ Տոմսակների գները 1 ր. 20 կ.—5 ր. ուսանողների համար—50 կոպ.։ 1—1

ԿՕՆՑԷՐՏ

ՏԵՆՕՐ

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ

(Իտալիայից)

Մասնակցութեամբ օր. Գասկի (սօպրանօ), պ.պ. Բրօջիի (բարիտօն) եւ Դօբրօխոտովի (վիօլենչելիստ), լինելու է ամսիս 30-ին, կիրակի օրը, Թիֆլիսի ձմեռային Ժողովարանի դահլիճում։ 1—2

ՄԻ ՀՄՈՒՏ ԱՆՁՆ

առաջարկում է իր ծառայութիւնները՝ հիւանդներ խնամելու եւ տնային տնտեսութեամբ պարապելու պայմանով։ Գիտէ լաւ կարել։ Հասցէն՝ Անտօնիեվսկայա, № 14։ 1—2

ԳՕՐՈՒ ԳԱՒԱՌԻ Ախալքալաք գիւղի հայոց դպրոցի չքաւոր աշակերտների համար հարկաւոր են 15 րուբլու չափ դասական պիտոյքներ եւ նոյն գիւղի չքաւոր ծխականներին ձրի անհրաժեշտ դեղեր բաժանելու համար տասն րուբլի, որի համար խնդրում ենք բարերարների ուշադրութիւնը։

Ախալքալաքի ծխատէր՝
Յարութիւն քահ. Միրիմանեանց

Հասցէն յայտնի է «Մշակի» խմբագրութեան։ 2—3

Թիֆլիսի Քաղաքային

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Նորեկ աշակերտների ընդունելութեան քննութիւնները լինելու են հոկտեմբերի 27-ին եւ 29-ին։ 2—6

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԷՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեօդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվորցովայա Նոմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։ 6—100

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
ԴՊՐՈՑ
ՕՐ. Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ

տեղափոխվել է՝ Бебутовская ул., Арсеньевскій тупикъ, домъ князя Эристова.

Ընդունելութիւնը շարունակվում է։ 3—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ որանով յայտարարում է, որ նրա դիւանատանը 1901 թւի հոկտեմբերի 2-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու հետեւեալ աշխատանքները,—քարայատակել 1) Արսէնալի խճուղին 800 քառ. սաժ. տարածութեամբ, 2) Լազարեան փողոցը, 300 քառ. սաժ. տարածութեամբ, 3) Կախէթի խճուղին՝ 800 քառ. սաժ. տարածութեամբ, եւ 4) ճանապարհը երկաթուղու գծից մինչեւ այնտեղ, ուր կտրում են միմեանց Կօպչերօվսկայեա եւ Անտօնիեվսկայեա փողոցները, 315 քառ. սաժ. տարածութեամբ, ընդամէնը 5500 րուբլի գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 3—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

7/20-ին Հոկտեմբերի մեկնելու է Բաթումից, ցերեկվայ ժամը 11-ին, ուղղակի գնացքով, «DOURO» շոգենաւը, հանդիպելով Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Վաթի (Սամոս կղզում), Մարսէյլ, Հավր եւ Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, նոյնպէս եւ մինչեւ Շանհայ (Չինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել Ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Վ. Յակօբեանին, նախկին Արծրունու գալէրէյում, № 127 գրասենեակը, տելեֆօն № 608։ Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկ. եւ 5—7-ը երեկոյեան։ 1—1

Հաշուապահութեան եւ գրասենեակային տեղեկութիւնների Կուրսեր
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԿԻՑ

(Երկրորդ տարի)

Երկու սեռի գրագէտ անձանց համար

եւ

Գործնական դասեր ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ հաստակաւորների համար

Պարապմունքների սկիզբն է հոկտեմբերի 2-ին։ Մանրամասնութիւնները իմանալ Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում (Զուգուրէթ, սեփական տուն) ամենայն օր, ժամի 9-ից մինչեւ 2-ը։ Կիրակի օրերը—ժամի 12—2։ 5—12

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկօլաեվսկայա, № 88.

Խնդիրքների ընդունելութիւնն սկսված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին։ Դասընթացքը բաժանված է կիսամեակների։ Պարապմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ։ Վճարը ամբողջ դասընթացքի համար 60 րուբլի։ Ընդունվում են երկու սեռի անձինք։

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

1) Հաշուապահութիւն	Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէններ, դասարանների հիմնադիրը.
2) Բանկային գործ	
3) Առեւտրական թուաբանութիւն	
4) Թուաբանութիւն հաշւեցոյցով։	
5) Տեխնօլօգիա	Մ. Ի. Ջէնգէրի, լեռնային ինժենէր, պետական խորհրդական.
6) Ապրանքագիտութիւն	
7) Թղթակցութիւն.	
8) Առեւտրական օրէնքներ	Վ. Ս. Մօսկալեօվ, պրօկուրօրի օգնական, Թ. Ն. Դ.
9) Առեւտուր	
10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկօվ, ինժենէր-երկրաչափ.	

Ոչ-պարտադիր առարկաներ

1) Ֆրանսիական լեզու—Է. Կ. Լիօզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Իւ. Ֆ. Գրումլիկ, դաս. Թիֆլ. րէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէններ.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար։

Խնդիրքները ընդունվում են դասարանների դիւանատանը, Նիկօլաեվսկայա, № 88. 21—25

„ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ" ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

Բժ. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ աշխատութիւններից.—«Վեներական ախտեր» 5 կ., «Սիֆիլիս» 10 կ., «Մարմնամարզութիւն» (25 պատկերներով) 20 կ., «Ո՞վ է յանցաւորը» 15 կ., «Կարիք եւ բարեգործութիւն» 15 կ., «Մանկավարժական համառօտ զրոյցներ» 15 կ., «Ժառանգութիւն եւ Դաստիարակութիւն» 15 կ.։

Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ աշխատութիւններից.—«Ամուսնութիւն» 75 կ., «Մի խմիր» 5 կ., «Վատ ցաւ» 6 կ., «Խօլէրա» 5 կ.։—«Ժանտախտ կամ չումա» 5 կ., բժ. Տէր-Իսահակեանցի։—«Բժշկարան», բժ. Լ. Տիգրանեանցի, 2 ր. 40 կ.։—«Գործնական խրատներ», բժ. Բօկի, 30 կ.։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ" (Лорисъ-Меликовская улица № 11), Г. Галустяну. 2—2

Կօնֆէտի եւ Շօկօլադի
գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մօնպանսէ, մարմելադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։

Պատուէրներով դիմել գործարան. Պավլօվսկայա փողոց, սեփական տուն, տելէֆօն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելէֆօն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլօնիական խանութներում։

Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։ 59—100

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Сентября 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.